Արձանագրություն N 2

Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կարիքների համար հերթերի կառավարման համակարգի ծրագրային ապահովման ծառայությունների ձեռքբերման «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/135» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի բացման նիստի

ք. Երևան

12.07.2019թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Ներսիսյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Ե. Մաթևոսյան /գնահատող/, Ա. Խաչատրյան /գնահատող/, Ա. Թամրազյան /բացող/, Ռ. Վարդևանյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Կիրակոսյան

1. Տեղեկություններ « ԵՔ-ԳՀԾՁԲ-19/135» ծածկագրով գնման ընթացակարգին հայտերի բացման մասին

(Ս. Ներսիսյան)

Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2019 թվականի հուլիսի 12-ին, ժամը 10:00-ին, Երևանի քաղաքապետարան, ք. Երևան Արգիշտի 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

2. « ԵՔ-ԳՀԾՁԲ-19/135» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակցի մասին

(Ս. Ներսիսյան)

Գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

հ/հ	Մասնակիցների անվանումը
1	«Ի 1» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

3.Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի մասին

(Ս. Ներսիսյան)

3.1 Գնանշման հարցում ընթացակարգի մասնակցի կողմից ներկայացվել է հետևյալ գնային առաջարկը.

ԵՔ-ԳՀԾՁԲ-19/135 հերթերի կառավարման համակարգի ծրագրային ապահովման ծառայություններ				
Մասնակցի անվանումը	Նախա-հաշվային գինը	Առաջարկած գինը		
		Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր
«Ի 1» ՍՊԸ	252000	210000	42000	252000

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

4.Տվյալներ բացված հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին

(Ս. Ներսիսյան)

4.2 Գնահատող հանձնաժողովի կողմից մասնակցի հայտը էլեկտրոնային համակարգի միջոցով գնահատվել է հետևյալ կերպ.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
«Ի 1» ՍՊԸ	բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

5. Ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակցի մասին

(Ս. Ներսիսյան)

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/135» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Ի 1» ՍՊԸ –ն, որպես բավարար գնահատված միակ մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

6. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների ծանուցելու մասին

(Ս. Ներսիսյան)

6.1 Հիմք ընդունելով <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ հարցում ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

7. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ս. Ներսիսյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել հարկային մարմնի կողմից եզրակացության ստացման հաջորդ օրը ժամը 10:30-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 2-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

անձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ս. Ներսիսյան

Անդամներ՝ ---------- Ե. Մաթևոսյան

---------- Ա. Խաչատրյան

---------- Ա. Թամրազյան

---------- Ռ. Վարդևանյան

Քարտուղար՝ ---------- Ն. Կիրակոսյան